



22. ՀՐԱՅԻ ՀԵՒԻԱԹԸ

Ժամանակով մի մեծատուն կար, մի տղա ուներ՝ անըմը Հրայի-
էտ հարըստի գործն էն էր, որ հ'իրեն ամբարները ցորնով լիքը
պահըմ էր, գալիս էր էն ժամանակը, որ ժողովուրթը նեղութուն էր
քաշըմ, սելերը բարցըմ էր, տանըմ բաժանըմ: Էլավ որ մեծատունը
մեռավ, իրավունքը ընկավ տղի ձեռը: Տղեն էլ հոր պես սելերը բար-
ցըմ էր ցորնով, տանըմ բազարը, տալի աղքատներին: Էտ մեծա-
տունը մի արար ուներ՝ տան դարավույ, մեծատունը որ մեռավ-
արարի հ'աշկն ընկավ մեծատան կնկա վրին: Հ'ինքն իրան մտա-
ծեց. «էս կնիկն ա ու էս տղեն, հ'արի մի ճար անեմ, էս տղան
կորցնեմ՝ էտ կնիկն առնեմ նստեմ էս կարողութունի վրին»:

Մի օր գնաց տղի հետ բազարը, ճամփին ասեց. — Այ տղա,
խի՞ շես պսակվըմ:

— Ընենց հարմարին ախշիկ չկա, որ առնեմ:

— Հ'արի՛ քեզ մի լավ տեղ դրկեմ. գնա Հուրի թաքավորի եր-
կիրը, նրա ախշիկը առ բեր: Հուրի թաքավորի ախշիկը երկնքի լիս-
նյակից սիրուն ա, շես կարալ էրկու ղանաթ հ'էրեսին թամաշ անիլ:

— Ախար հեռու ա դրանց երկիրը, ոնց էթամ:

— Ես թահրը կասեմ: Էթա՞նք մի լավ ձի առնենք, վեր ունենք
էս ձորըմը մորթենք, փորը դուա տանք, քեզ կոխեմ մեչն ու փորը
կարեմ: Ղշերը կգան, վե կուանեն քեզ, կտանեն Հուրի թաքավորի
երկիրը:

Տղեն հավատաց էտ արարին. գնացին մի ձի առան, մորթե-

ցին, փորը դուս տվին, տղեն նի մտավ ձիու փորի մեջը, արարը կարեց, վե կացավ ուրախ-ուրախ էկավ տուն, ասեց.— էս լավ էլավ, տղեն կորավ, ես մորը կառնեմ:

Մերը հարցրուց, թե.— Տղես հո՞ւր ա:

— Գիտում չեմ, ինձնից հառաչ էկավ:

Տեսավ որ արարի միտքը ծուռն ա, արարին դուս արուց՝ դուռը շինեց.— էլ ինձ պետքը չես,— ասեց,— զնա՛ կորի:

Ղշերը էկան ձիուն վե կալան տարան: Տարա՛ն Քյալլա-գլուզի ևրկրումը վե դրին, ու սկսեցին ուտել: Կերա՛ն, կերան, հասան տղին, տղեն դուս էկավ ձիու փորի միջիցը ընդի կաննեց: Ձեռ ու ստը լվաց, տեհավ մի հաշկանի պառավ կնիկ ջուրն էկավ. հաշ ծիծը քցել ա ձախ հուսը, ձախ ծիծը՝ հաշ հուսը, էկավ էտ տղին քարով տվուց, ասեց.— Իսան-օղլի, խի՞ ես կաննել ըտեղ:

— Բա ինչ անեմ, նանի, դարիբ եմ:

— Հարի էթանք մեր տունը:

Վեր կացան զնացին:

— Ա՛յ որթի,— ասեց պառավը,— հարի քեզ ես պահեմ, օղղես կզան քեզ կուտեն, օխտը դե են:

Հիրիկունը տղեքն էկան:

— Ա՛յ մեր, մեր տանից իսանի ֆոտ ա գալի:

— Ա՛յ որթիք, սարից, ձորից դուք եք գալի, իսանի ֆոտ ձե-
զանից կզա, էլ ումից պտի գա:

Մի քիչ կենալուց ետո, ասեց.— Որթի ջա՛ն, էսօր մի իսանի ձուտ եմ կալել:

Ասեցին.— Հլա բե տենենք:

Վե կացավ Հրայիսին վե կալավ բերուց տղեքանց կուշտը:

— Այ տղա, ո՞ր դիանցի ես:

— Ես Դուրով քաղաքիցն եմ:

— Ո՞ւմ տղեն ես:

— Մեծատան տղեն եմ:

— Մեծատա՛ն. աստված նրա հոքին լուսավորի, շատ լավ մարթ էր, օխտը տարի մենք նրա ցորնովը կառավարվել ենք, նա չըլեր՝ մենք սովամահ կըլեինք: էտ ինչ լավ էլավ, որ դու քու ոտովը էկել ես, բարով, հազար բարով ես էկել: Վեկաց վիրի գլուխը նստի: Ա՛յ մեր, բեր, ինչ լավ բան ո՞նես՝ բեր, էլ ըսենց մարթ մեր տունը գալ չի:

Բերին էտ տղին մի շափաթ պահեցին, ուտացրին խմացրին՝
 Մի շափաթից տղեն վե կացավ, որ էթա:
 — Բա ո՞ւր ես էթըմ, ա՛յ շարըդ տանեմ:
 — էթըմ եմ Հուրի թաքավորի ախշիկը առնեմ:
 — Տեհե՛լ ես էտ ախշիկը, գիտե՛ս ճամփեն:
 — Ես տեհել չեմ, լսողանց եմ:
 — Հ՛արի քեզ տանեմ քառասուն հարամու տների կուշտը վե
 դնեմ, դամ, շոճքի նրանք որ մեզ տենեն՝ մեզ կսըպանեն: Նրանք
 քեզ կտանեն Հուրի թաքավորի երկիրը:
 Վե կալավ տղին դրուց հ՛ուսին, վազեց: Տարավ դրուց տան
 կուշտը, հ՛ինքը ալբիալը ետ դառավ, էկավ տուն:
 Հարամիքը էկան տեհան, որ մի ջահել տղա մի քարի վրի նըս-
 տած ա: Առան տարան հարամբաշու կուշտը:
 Տղեն բարև տվուց հարամբաշուն, կաննեց:
 Հարամբաշին հարցրուց.— Ի՞նչ մարթ ես:
 — Ես Դուրով քաղաքի Մեծատան տղեն եմ:
 — Մեծատան տղե՛ն: Տղե՛րք, ճանանչը՞մ եք ում տղեն ա:
 — Չէ՛, հարամբաշի:
 — Հալըաթ, կերել մարսել եք, խի կճանանչեք: Միտներդ ա,
 որ իրեք թաքավորի երկիր հ՛անց կացանք, խոտ ինք ուտըմ, ետո
 գնացինք Դուրով քաղաքը, հարցնելով հարցնելով Մեծատան տունը
 քթանք, մեզ պահեց օխտը տարի. էս էն մարթի տղեն ա:
 — Ինչի՞ հըմար ես էկել:
 — էկել եմ էթամ Հուրի թաքավորի ախշիկը առնեմ:
 — Իրեք օր ըստի կաց, որթի, քու հոր լավութունի տակից դուս-
 գանք, ետո քեզ կտանեմ Հուրի թաքավորի քաղաքը: Վախիլ մի՛,
 ախշիկը կառնես: Դե տղեք ջան, նի էլեք ձիանը, ընկեք սարերը,
 հ՛ամեն ջուռա բան բերեք, որ էս իրեք օրը ուտենք, խմենք, քեֆ
 անենք:
 էտ իրեք օրը կերան խմեցին, վրա շորս օրը՝ հարամբաշին
 տղին քաշեց թարքը՝ վեր կալավ տարավ, թաքավորի խնամաքարի
 վրին նստացրուց, ինքը թողուց գնաց:
 Տղեն վե կացավ խնամաքարի վրի դանգակները քաշեց, նա-
 զիրն էկավ ասեց.— Ի՞նչ մարթ ես:
 — էկել եմ թաքավորի ախշիկը ուզելու:
 Գնաց թաքավորին իմաց տվուց, էկավ առավ տարավ:

Թաքավորն ասեց.— Ո՞րդիանցի ես:

Ասեց.— Դուրով քաղաքից եմ, Մեծատան տղեն:

— Ձեր տունը քաղաքի ի՞նչ տեղն ա:

— Թաքավորի տներին կպած ա, մառմար քարից, հախալուն էլ տակին:

— Այ հազար բարի ես էկել, այ տղա, մենք ձեր հոր հացը շատ ենք կերել, քանց թե մեր հացը, ես ուրախ ի, որ քե պես մարթի տղեն գար իմ ախշիկը ուզեր: Մենակ մի պայման ունեմ քեզ հետ անելու:

— Ի՞նչ պայման:

— Էս պայմանը, որ իմ ախշկա հ'էրեսը մարթ չպլտի տենի, քու մորից սավայի. որ տեհամ՝ հ'էքսի օրը իմ ախշիկը ըստեղ ա:

Տղեն ասեց.— Շատ լավ:

Կանչեց ախշըկանը կուշտը, ասեց.— Ախշիկս էս ա, ա՛յ տղա, կլանե՞ս:

Տղեն տեհավ, որ երկնային լիս ա ախշիկը, ֆոքին փառավորվեց, կարաց ոչ խոսա:

Բերին հարսանիքը բռնեցին, օխտը օր, օխտը քշեր՝ քեֆ արին, սրանց պսակեցին: Բաժինքը բարցեցին ղաթրներին, նի էլան ձիանքը, դնացին հ'իրանց երկիրը: Մերը տեհավ, որ էկողը հ'իրա տղեն ա, քսան ղաթիր հետը բարցած, մի սև արաբղզի շորեր հաքած շատ բոյով ախշիկ հետը դալիս ա:

— Վա՛յ,— ասեց,— ափսո՛ս իմ տղեն, էս ինչ դառցըվորված, սև ախշիկ ա առել էկել:

Մերն էկավ, փաթըթվեց տղովը, հարսին բարևեց, նի էլան վիրև: Ախշիկը ման էկավ օթախները, տեհավ որ համեն բան թամամ ա՛ ուրախացավ: Նի մտավ, շորերը հանեց, հաքավ հ'իրա թաքավորական շորերը. տղի մերը տեհավ, խելքը փնաց:— Արժան ա քեզ, այ տղա,— ասեց:

Մի քանի տարի սիրով-սավղով ապրեցին, հարսը ետ ընկավ¹:

Օրերի մի օրը հարսը բալկոնի փանջարին նստած էր, քառսուն հուար կախ էլած քամին տանում բերում էր: Թաքավորի տղեն բերուց դրանց, ախպրըմը ձին ջրի: Տեհավ ձին ջուր չխմեց, ետ դառավ ձիուն շատ ծեծեց. տեհավ ըլնըմ չի, մի ղաֆիլ հաշկը քցեց վիրև,

¹ Չգիտցավ, (ծանոթ. քանահավաքի):

տեհավ քառսուն հ¹ուս տանում բերում ա քամին: Ասեց.— Մազերը որ էս ա¹, հ¹ինքը ինչ կըլի:— Կուսցավ, հ¹ախարի մեչ պատկերը տեհավ, յարեն թաղացավ, տարավ ձին կապեց, դուս էկավ: Հարց ու փորց արուց, հ¹իմացավ, որ Մեծատան տղի կնիկն ա, Հուրի թաքավորի ախիկը: Ասեց.— Ես տղա չըլնեմ, թե որ դրան ձեռ չբերեմ:

Վե կացավ գնաց բազար. սկսեց տղի հետ ախպեր-տղութուն անիլը. տարավ բերուց հ¹իրանց տունը, մին օր էլ ասեց.— Ես քեզ անիլ պտեմ ինձ քավոր:

Մի վախտ քաշեց, թաքավորի տղեն նշան տվուց մի ախչկա: էկավ էտ տղին տարավ քավոր արուց: Պսակեցին, հարսը բերին տուն. պսակաճաշի օրը թաքուհին խնթրեց, որ մեր քավորակինը գա մեր հարկի մեջը քննըվի: Թաքավորը կանչեց քավորին, շատ խնթրեց, որ մորն ու կնկանը էթա բերի: Տղեն ասեց.— Անկարելի ա, դալ չեն:

Ետո մի քանի թաս գինի խմացրին, ասեցին.— Զ'արի' մեզ հետ էթանք, բալքի բերենք:

Թաքավորը, թաքուհին ու քավորը հ¹իրար հետ գնացին քավորի տունը. հարսը փախավ, տափ կացավ. Հրային գնաց թևիցը բռնեց քաշելով բերուց թաքավորի կուշտը: Թաքավորը տեհավ դեն ու դեն էլավ¹, քաշելով քաշկոտելով վե կալան տարան հարսանքատուն: Վաթսուն օթախ լիքն էր, նորահարսին թողին, քոմմա էկան քավորի ու քավորկնկա կենացը խմելու. մի-մի ըստաքան էլ քավորին, քավորի կնկան ու քավորի մորը տվին:

Քավորը վե կալավ ասեց, թե.— Կնիկ ջա'ն, նի կմնես էտ վաթսուն օթախը, կենտ-կենտ գլուխ կտաս, կգաս թաքավորի կուշտը կկաննես:

Քավորակինը ճարը կտրած մտավ վաթսուն օթախը՝ բիրադրենին գլուխ տվուց, էկավ թաքավորի կշտին կաննեց: Մըն էլ ըուրը կաննած դոռացին, թե.— Ուղըմ ենք, որ քավորակինը մի հաղ անի:

Մարթը գնաց ասեց.— Կնիկ ջա'ն, հոճարը մնաց քեզ, ինձ ամանչացնիլ մի:

Կնկա սրտիցը դու խաբար տուր:— Ա՛խ,— ասեց,— թե կէթամ տուն, դու կտենես թե ինչ կանեմ:

Ճարը կտրեց, ասեց.— Աճեցե՛ք:

¹ Հիացավ, (ծանր. բառահավաքի):

Չաղլիքը ածեցին. շիրիցը էրկու հատ արբըշը մի աղլուխ հանեց, աղլուխ թե աղլուխ, հիրան թողին՝ աղլխին թամաշ արին: Սկսեց հաղալը: Ժողովուրթը իրար ին հեղտում, նի՛նը մ ին հիրար շալակ: Հաղալուց ետո գլուխը բանցրացրուց, որ գլուխ տա, բոխաղը որ շտեհան՝ շատերի խելքը մաղվեց: Հաղը պրծավ, էկավ կեսուրին ասեց, թե.— Գնանք, որ կտրեք, ես էլ մնալ չեմ:

Թաքավորն ասեց կեսուրին.— Որ չմնա, դու տար, ետ դառ հարի:

Կեսուրը հարսին տարավ տուն, հինքը ետ դառավ էկավ: Հարսը էտ հրոպպին շորերը փոխեց, հիրա արաբղղու շորերը հաքավ, ձին դուս քաշեց, նի էլավ՝ գնաց դըբա իրա հոր քաղաքը:

Հրային հառավոտը էկավ տուն, լաց էլավ, համա ինչ արած՝ «Գետտի գլուխ, գետտի բիլբուլ, իստար աղլա, իստար գլուխ»¹:

Տղին հառավոտնեց վե կացավ, նստեց ձին, հարփած մարթի նման ընկավ ճամփեն, գնաց: Ծամփեն մոլորեց, օխտը օր, օխտը քշեր անհաց-անշուր քշեց՝ դուս էկավ Հալապ: Հարցրեց մի բաղպանի թե.— Հուրի թաքավորի երկիրը ո՞ր ճամփով են էթըմ:

— Է՛, ախպեր շա՛ն,— ասեց,— կորցրել ես ճամփեն, հըմի վաղուց հասած պըտի ըլիիր ընտեղ:

— Ի՛նչ կուզես՝ ինձ տանես հասցնես Հուրի թաքավորի քաղաքը, իմ խելքը գլխիս չի:

— Որ ըտենց ա, հարի էս քշեր իմ կշտին կաց, հառավոտնեց քեզ ճամփա քցեմ, ինձ մի ախպոր տղա ունեմ, համեն ճամփա ճանանըմ ա, ինչ կտաս տու, նա քեզ կտանի կհասցնի տեղ:

Քշերը ըտեղ կացավ ղոնաղ, տղի վրեն տարի հանց կացավ: Կիսը բաց էլավ՝ բաղպանը գնաց ախպոր տղին վե կալավ բերուց, տեհավ որ մի դալուղանլու տղա ա, ընկան ճամփա գնացին: Գնացին հասան Հուրի թաքավորի քաղաքը:

Տղին մի բան տվուց ետ դարձրուց, հինքը գնաց դուզ ախչկա օթախը: Ը՛իրիկուն էր: Ակուշկից տեհավ, որ մի շահել տղա կնկա հետ հաղ էր անըմ:— Հե՛յ վախ,— ասեց,— կնկանն էլ էյթիրար չկա:

Ուզեցավ նետով տա՝ կշտի տղեն սաբըն էկավ, ասեց.— Հըլա

¹ Գնաց վարթը, գնաց սոխակը, ուզըմ ես լաց իլ, ուզում ես ծիծաղա, (ծանոթ. բանասացի):

մի քիչ էլ համփերեմ, տենամ ինչ ա դուս դալի:— Տեհավ, որ տղեն ավելի շատ հանաք արուց, ձեռները քցեց կնկա ծծերին. «Հայ վա՛խ, հայ» ասեց ու նետը լարեց, որ քցի, տղեն ասեց.— Ա՛յ մեր, ըսկի հանաքի դիմանում չես: «Ա՛յ մեր» խոսքը որ լսեց՝ Հրայի կռները թիլացավ, դուռը ծեծեց: Դուռը բաց արին, հ՛իրան քցեց կնկա ոտը.— Նս մեղա աստու, կնի՛կ:

էտ քշերը էտտեղ թեք ընկավ, քնեց, հ՛առավոտը կնկա հետ վե կացավ գնաց թաքավորի մոտը. դուլս տվին կաննեցին:

— Էկար հա՛, ա՛յ տղա,— ասեց թաքավորը,— ես քեզ հետ ի՞նչի խոսացել:

— Հազար ներողութուն, ջահելութուն էր անցավ, ես էլ եմ փոշմանել: Խնթրում եմ մեզ ճամփու քցես էթանք, մեր հոր օջախը մնացել ա դարտակ:

Թաքավորը ճամփու քցեց թոռին, ախշկանը, փեսին: Էկան հասան հ՛իրանց երկիրը: Մի քանի տարի հ՛անց կացավ վրովը, տղեն հ՛առաչը կաննեց ասեց.— Ափո՛ւ, ես սլըտի էթամ, պապիս, տատիս վեր ունեմ բերեմ, մի քանի վախտ ըստի կենան, մխիթարվեն:

— Գնա՛, — ասեց հերը, — բարով գաս:

Տղեն գնաց, պապին ու տատին վե կալավ էկավ, մի վախտ ըտեղ կացան, կերան խմեցին, հ՛ուրախացան, վե կացան գնացին հ՛իրանց երկիրը: Նրանք հասան հ՛իրանց մուրազին, մենք էլ հասնենք մեր մուրազին:

Երկնքից իրեք խնձոր վեր ընկավ, մինը՝ ասողին, էրկուսը՝ հ՛անգաջ դնողին:

